Աշխատանքի ծածկագիր 9197

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 19.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ.Աբգարյանի
Ա.Վարդանյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են տարբերակ 6-ի **քրեական իրավունքի բաժնի** 5-րդ, 2-րդ, 34-րդ և 26-րդ հարցերը:

Հարց 5

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, հավակնորդի բերած հիմնավորումը, որ գործ ունենք նույն արարքի հետ, չի բխում ներկայացված խնդրի փաստական հանգամանքներից: Հավակնորդը բավարար ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ դատարանի դատավճռից հետո Բ-ն 6 ամիս բարեխղճորեն կատարել է ալիմենտի վճարումները, սակայն դադարեցրել է, որից հետո դրսևորել է նոր հանցավոր անգործություն՝ խուսափելով ալիմենտի վճարումից:

Հարց 2

Վիճարկման արդյունքում գնահատականը բարձրացվում է 1 միավորով, քանի որ հավակնորդը վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշում, որում յուրացման հանցակազմը վերլուծվում է հետևյալ կերպ. «Յուրացման դեպքում հանցավորը գույքն առանձնացնում է դրա սեփականատիրոջ գույքային ֆոնդից և

միացնում իր կամ մեկ ուրիշի գույքային ֆոնդին՝ օգտագործելով այն լիազորությունները, որոնք նրան վերապահված են եղել այդ գույքի նկատմամբ: Այդ հանգամանքն ունի առանձնահատուկ նշանակություն անձի արարքում յուրացման հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների առկայության հարցը քննարկելիս»: Վերոնշյալ նախադեպում արտահայտված դիրքորոշումը և խնդրի մեջ օգտագործված «դարձրել է» եզրույթի օգտագործումը կարող էին հավակնորդին հիմքեր տալ ողջամտորեն ենթադրելու, որ նախքան Ֆ-ի տիրապետության ներքո անցնելը տվյալ գույքը յուրացվել էր Վ-ի կողմից:

Հարց 34

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ պաշտոնատար անձի արարքի որակումը պետք է տրվեր ներպետական օրենսդրության առանձնահատկությունները հաշվի առնելով: Միջազգային իրավական նորմերի արտացոլումը ներպետական օրենսդրության մեջ կարող է դրսևորվել տարբեր հոդվածներում և հանդիսանալ տարբեր որակումների հիմք, որը բնավ չի հակասում ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարատավարություններին:

Հարց 26

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ բերված հիմնավորումները չեն համապատասխանում հանցանքը խմբի կողմից կատարված լինելու մեկնաբանման կանոններին: Թեև հավակնորդը մատնանշում է միջազգային կոնվենցիոնալ դրույթներ, սակայն ՀՀ քրեական օրենսգիրքն այդ դրույթները արտացոլելիս սահմանել է հստակ չափանիշներ, որոնց հիման վրա էլ պետք է կատարվեր որակումը: Մասնավորապես՝ մեր օրենսդրությունը տարբերակում է մտցրել պաշտոնատար անձի և այդպիսի անձ չհանդիսացող հանրային ծառայողի միջև, մասնավորապես՝ օբյեկտիվ կողմից նույնական արարքներ կատարելու համար պատասխանատվությունը սահմանել է տարբեր հոդվածներով: Հետևաբար, հավակնորդի կողմից տվյալ երկու հատուկ սուբյեկտների նույնացման փորձը գործող օրենսդրության պայմաններում հիմնավորված չէ:

Բողոքարկվել է **քրեական դատավարություն բաժնի** 37-րդ հարցը:

Վիճարկման արդյունքում գնահատականը բարձրացվում է 1 միավորով, քանի որ խնդիրը հստակ ձևակերպված չէ, կարող են որպես ճիշտ պատասխան դիտարկվել նաև այլ տարբերակները: Բողոքում հավակնորդի ներկայացրած հիմնավորումները Հանձնաժողովի կողմից դիտարկվել են ողջամիտ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության և խնդրի ձևակերպումների ոչ միանշանակությունը:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 9197 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական իրավունքի բաժնի 2-րդ և քրեական դատավարության բաժնի 37-րդ հարցերի պատասխանը գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, ընդհանուր՝ 2 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԱԲԳԱՐՅԱՆ

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ